



891.71

ԽՈ. ԿՈԶԵՐԴԱ.

ԺԱՄԱԳՈՐԾՆ ՈՒ ՀԱՎԸ

ԿՈՄԵԴԻԱ և ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՄԲ

~~20-34~~
A 39381

Թարգմանեց՝ ԱՐՏ. ՍՏԱՄԲՈԼՅԱՆՆ



ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՑԵՐԵՎԱՆ - 1937



Պատ. Խմբ. Ա. Տեր-Հովհաննյան
Տեխ. խմբ. Ծ. Ճիթիքալյան
Սըբագրիչ Ա. Հակոբյան

Հըստ. 3447, Տիբաժ 2000.
Հանձն. և արտադ. 29-1-37 թ.
Սառցագրված և տպելու
17-2-1937 թ. Ստատֆ. Ա5.
Պատվիր 216.

Թաւյատրված է Խնդիրութաւ-
րային հեկողության զիխավոր
վարչության կողմից կատար-
ման համար Ա. Ղուկասյան ՀԱՆ
տականներում № 33, 22 սպու-
տում, 1935 թիվ. Յերեվան:

Уполномоченный № 0-468
Типография Краевого
Армянского Издательства
„ГРО“, Ворошиловский
пр. № 27.

ԳՈՐԾՈՂ ԱՆՁԵՐ

ՅՈՒՐԿԵՎԻՉ

Հիմն

ԿԱՐՖԱՐԻՆԿԵԼ—Պոկտոր
ՏԱՐԱՏՈՒՏԱՆ

ԶԵՐԵՎԿՈՒ—մեքենավար

ՈԼՅԱՆ—սրա կինը

ԼՈՒՆԴԻՇԵՎ

ՍՈՖԻԱ ՊԵՏՐՈՎՆԱ

ԳՆԴԱՎԵՄ

Սպա

ՊԵՐՈՎՀԻԿ

ԲԱԳԺԱԿԱՆ գնացքի կոմիսար

ԿՈՆՏՐՃԻՃԻ քարտուղար

ԿՈՒՐԻՒՑՈՒ—կազերմեյտեր

ԸՆԿԵՐ—Հեղկոմից

Կայարանի բանվորների կանայք, կայարանի ծառայողներ,
Հանապարհորդներ, կարմիր բանակայիններ, խորհունտեսության
ծառայողներ, պարկակիրներ, զինվորներ, կանայք՝ ձեռքերին
հավեր:

Դեպքը տեղի յե սևենում յերկաթուղարձի միկունյան կայարանում, բայց տար-
բեր ժամանակներում 1 գործողությունը—1912 թվին, II գործողությունը՝ 1919
թվին, III գործողությունը՝ 1920 թվին և IV-ը՝ 1929 թվին.

ԱՌԱՋԻՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Յերկաթուղագծի փոքրիկ կայարանի ուղևորների սենյակը, Յերկու պատուհանուր բաղմաց, տթոռներ, հացենու փայտից հղկված սեղանն ժամացույցը, Դեպի ձախ՝ դուռ և կանանց սենյակը՝ մակագրությամբ, աջ կողմում՝ մուտքի դուռաց նմառային յիշեկո յև Պատուհանից նշարվում են կայարանի կանաչավուն լույսերը, Դօկուոր ԿԱՐՖՈՒՆԿԵԼԸ ծալապատիկ նստել ե բազմոցին և թեյ ե խմում, Տուփերի միջից հանում և նորից տեղը դնում բազմաթիվ և զանազան ահսակի ժամացույցեր, Սալղար, չոր-չորիկ, անորոշ տարիքով մարդ և, կոկ (ելեզանու) հաջնված ջենալմեն: Աջ այտը կապել ե բաց-կարմիր գույնի մետաքան թաշկինակով ատուհաններից լովում և դրսի կայարանի սովորական ձայներ: Լույսերը վառ վում են, լսում ե շոգեքարշերի շշակների զիւ սուլոցները:

Մտնում է ՑՈՒԲԿԵՎԻԶԲ, 25 տարեկան յերիտասարդ, սրա յետելից ԲԵՌՆԱԿԻՐԸ, ներս և թրում ու դնում հատակին պինդ քարանի մեջ ծրարված յիլ պարտնով կապած գոքր սնդուկ:

ՑՈՒԲԿԵՎԻԶ. Մինչև Մոսկվա յերկրորդ կարգի: Յեղ պլաց-քարտ:

ԲԵՌՆԱԿԻՐ. Կասսան դեռ չեն բացել: Բագաժ չե՞ք տալու:

ՑՈՒԲԿԵՎԻԶ. Վոչ, վոչ: Մնագուկն ինձ հետ կվերցնեմ: Բայց տեսեք՝ հենց վոր մատեցավ, կհայտնեք: Ութից քսան և պակաս: Չգիտե՞ք, գնացքը շնուտ կդա:

ԲԵՌՆԱԿԻՐ. Զանգը դեռ չեն տվել: Ուրեմն շուտ կդա: Յեթե շուշանա, կես ժամից հետո: (Քնում ե առանց դաւոք ծածկելու):

ԿԱՐՖՈՒՆԿԵԼ. (Չայրացած) Դոններվեանք: Նեղություն կրեք դուռը ծածկել: Փշում ե, միջանցուկ քամի յի:

ՑՈՒԲԿԵՎԻԶ. Ներեցեք, թարմ ող ե:

ԿԱՐՖՈՒՆԿԵԼ. Ոդ, ոդ: Զալբագերեց: Հիմնը շատախոսություն: Ոդի և հիմարների համար դռները միշտ բաց են: Փակեցեք դուռը, յիս մըսած եմ, լսում եք:

ՅՈՒԽԿԵՎՀԻՉ. (Քարենովաւրյամբ) Տերն ընդ ձեզ, դուրսն այնպիս շոգ ե:

ԿԱՐՖՈՒԽՆԿԵԼ. Շոգ ե, շոգ ե: Յես ձեզ ասում եմ, վոր հիվանդ եմ—իս հարբ ցանչմերց: Ատամի սաստիկ ցավունիմ... Ոսոսու... անիծված ցավ: Անիծված յերկիր: Անիծված ցուրտ... Հավիտենական մրսել, հավիտենական ատամի ցավ: Ու-ու-ու-ու:

ՅՈՒԽԿԵՎՀԻՉ. Ներեցեք, խնդրեմ: (Ետայ ծածկաւմ ե դաւոք) Լիովին ցավակցում եմ ձեզ: Լիովին հասկանում եմ ձեղ, վողորմած պարոն—պատիվ չունեմ իմանալու ձեր... (Վարոնում ե իր պայտասակում):

ԿԱՐՖՈՒԽՆԿԵԼ. (Հառաշելով գլուխ ե տալիս) Պարփռւնկել, գաղտնի խորհրդական և մեքենագիտության դոկտոր:

ՅՈՒԽԿԵՎՀԻՉ. (Գլուխ տալով) Շատ ուրախ եմ: Յուրկեվիչ, գիմաղիոնի ուսուցիչ և մի քիչ գրականագետ: Ուրեմն գուք գաղտնի խորհրդական եք: Ո՞, այդ մեծ աստիճան ե:

ԿԱՐՖՈՒԽՆԿԵԼ. Գաղտնի, գաղտնի: Բանը անունի մեջ չե, այլ իմաստի մեջ ե: Իս մասնագիտությունը—ժամացույցն ե—յես եմ ժամանակի ժայստեր:

ՅՈՒԽԿԵՎՀԻՉ. Ո՞, նշանակում ե ժամացույցի վարպետ եք—ժամագործ... Իսկ յես կարծեցի, թե...

ԿԱՐՖՈՒԽՆԿԵԼ. Զալբաղերեց: Ի՞նչ անմտություն: Ժամացույցի վարպետը ժամացույց նորոգի ապօւշների համար, վորը չի իմանա, թե ինչ ե ժամանակը: Իսկ յես եմ մայստեր դեր ցայտ: Յես ուսումնասիրել իմ ժամանակը և նրա զսպանակները:

ՅՈՒԽԿԵՎՀԻՉ. Ինչ վոր խենթի մեկն ե յերեսաւ:

ԿԱՐՖՈՒԽՆԿԵԼ. Ժամագործ, ժամագործ... Ոխ, ոխ, ոխ: (Բոնում ե այսը):

ՅՈՒԽԿԵՎՀԻՉ. Ցավը չի կտրվում: Գիտեք, մի անգամ յես ել եմ սոսկալի առանցքել ատամի ցավից, չնչին միջանցուկ քամուց քիչ եր մնում լաց լինելի: Յեվ գիտե՞ք ինչն ոգնեց ինձ: Կաթիլները: Մի անգամ գյուղում ծանոթներիս մոտ եյի, այնտեղ մի ծերուկ բժիշկ ինձ կաթիլներ տվեց, կարող եք յերևակայել, հենց մի կաթիլից—ցավի իսկույն անցավ: Այդ, ինչ վոր հնուց հայտնի և ազդու միջոց եր, կարծեն բելազաննա, մեխակի յուզ, ուղիում եր, բայց զարմանալի ոգնում ե: Յես նույնիսկ ճանապարհ գնալիս ել յերեք չեմ բաժանվում այդ կաթիլներից, թեև այն որվանից ատամնելու բնավ չեն ցավել:

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. (Վեր ե բոչսամ յեկ այտը բոնած գլուխ տալիս) Ո՛, թանկագին պարոնս, մայն լիբեր հերը Յուրի-Յուրիկելիչ: Ի՞նչզիսի բախտավորություն: Միք մերժի, տվեք ինձ այդ դեղից մի կաթիւ: Հավատացեք, իմ շնորհակալությունը... Միայն մի կաթիւ Ուո՞ւ... անիծված ցավ:

ՅՈՒԻՐԿԵՎԻՉԻՉ. (Նփրդած) Ո՛, ի հարկե, ուրախությամբ (Վորոնում ե պայօւսակրամ) Բայց... հասկանում եք, ինչ ցավուլի բան, պայուսակում չկա: Յերկի սնդուկիս մեջ եմ դրել: Այո, իհարկե, սնդուկիս մեջն ե: Հիմա յեմ հիշում—արկղիկի մեջ եր դրած:

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. Արկղիկի՞: Ո՛, հիանալի յե: Շատ եմ խնդրում ձեզ, թանկագին բարեկամաւ Միայն մի կաթիւ:

ՅՈՒԻՐԿԵՎԻՉԻՉ. (Սկսում ե բարկանալ) Ե՛, ինչ եք ասում: Սնդուկից հանել կաթիւները: Արկղիկը սնդուկի ամենատակն ե դրած, իսկ սնդուկն ել տեսնում եք ինչպես ե ծրարդած: Մտածելն անգամ պվելորդ ե:

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. Բայց աղաչում եմ ձեզ, իմ ազնիվ յերիտասարդ: Ո-ո-ու... մայն բեսաեր հերը:

ՅՈՒԻՐԿԵՎԻՉԻՉ. (Զայրացած) Բայց դուք հասկանում եք, վոր յես մեկնում եմ: Այո, այս սնդուկը հենց միայն բաց անելու համար առնվազն կես ժամ ե հարկավոր: Իսկ նորից դարսելը, նորից կապելը: Դուք չլսեցի՞ք, վոր գնացքը կես ժամից կդա: Յեթե յես այս գնացքին չհասնեմ, այդ... ֆուհ... մտածելն անգամ սուկ-սպի յե:

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. Ոյ, ո... ոյ... Ի՞նչ սոսկալի ցավ ե: Աղաչում եմ ձեզ, իմ թանկագին պարոն... մայն զուսաեր հերը, յեթե միայն իմանաք ինչ սոսկալի... ո... ո... ո... ինչ ու... ու... ու...

ՅՈՒԻՐԿԵՎԻՉԻՉ. Բայց դուք չեք հասկանում, վոր այդ անկարելի յե, թհու, անկարելի յե սնդուկը բաց անել: Չե վոր յես գնացքին չեմ հասնի: Իսկ յեթե գնացքից հետ մնամ, կկորցնեմ իմ ամբողջ կյանքում ունեցած յերազանքս: Քսան բոպիյից՝ զեպի Մոսկվա վերջին գնացքն ե: Ժամը 11-ին կա նաև ճեպընթացը, բայց նա այստեղ կանգ չի առնում:

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. Ու... ու... ու... Մի կաթիւ:

ՅՈՒԻՐԿԵՎԻՉԻՉ. Բայց դուք հասկանում եք, վոր վերջին գնացքն ե գեղի Մոսկվա: Յեթե յես վազը առավոտյան Մոսկվայում չինեմ, Փարիզ գնալ չեմ կարողանաւ: Փարիզ, վորի մասին յես այնքան յերազել եմ:

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. Փարիզ: Դուք Փարիզ եք մեկնում:

ՅՈՒՐԿԵՎՈՒԶ. Այս, ցուցահանդես մեկնում եքսկուրսիայի տոժմ եմ գնել: Եկակուրսիան Մոսկվայից մեկնում ե վաղը ժամի 12-ին, նշանակում ե, վոր յեթե յես ուշանամ, կկորցնեմ թե իմ փողերը և թե իմ ամբողջ հույսը: Դուք հասկանում եք, թե ինչպես եմ հուզվում... Ընկնել Փարիզ, արտասահման, ցուցահանդես, միթե մի այլ այսպիսի առիթ կարող ե պատճենել: Յեթե դուք ևս 10 տարի ապրած լինեցիք մեր այս խուլ անկյունում, կհասկանայիք, թե ինչ ե նշանակում այսպիսի յերազանքը: Թերևս այնտեղ ե վճռվում իմ բախտը: Յես զրող եմ... Թերևս Փարիզում... Եհ՝, ինչ կարիք կա խոսելու:

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. Ու, ու... (Նստում ե սեղանի մոս, արռովին) Հիմար զալբաղերայ: Դուք ուղղակի չցանկանաք ինձ ոգնել: Կարելի յի 20 անդամ բաց անելու կապել այդպիսի քսան սնդուկներ... Ո... ո... անիծյալ ցավ: (Կամաց հառաջում ե):

ՅՈՒՐԿԵՎՈՒԶ. Խոզված շրջում ե սենյակում. Պառզա:

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. (Հանկարծ վեր ե բռչում յեվ կրանում ե ցած, ինչ վար բան ե վարսենում հատակին) Ա՛, Դոններվետեր: Բանեցեք, բռնհցեք—նա ձեզ մոտ ե... նա գլորվեց:

ՅՈՒՐԿԵՎՈՒԶ. (Վուները բարձրացնելով) Ո՞վ գլորվեց, ո՞վ գլորվեց: Վարեղի ե:

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. (Հատակին սօղալով) Վոտքերդ վրան միք դնի: Մեկ... յերկու... յերեք...

ՅՈՒՐԿԵՎՈՒԶ. (Կռացած վարսենում ե) Ախը ի՞նչ ե:

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. (Յույց և տոլիս մի փոքրիկ վասկլա տափ) Յես թափեցի... մի դյուժին պիլյուլներ — այսպիսի գնդիկներ: Ուղիղ մի դյուժին, Խնդրեմ, ոգնեք ինձ դտնել:

Յերկուսն ել կրացած վրանում են ամբաղջ սենյակում:

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. Զգույշ, վոտքերդ վրան չդնեք: Յերկու... յերեք... ցվայն, դրայ:

ՅՈՒՐԿԵՎՈՒԶ. Գտա, գտա—մեկ յերկու... դարձյալ մեկը, ահա մեկն ել:

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. Շնորհակալ եմ: (Վորսենում ե) Բիտտե նոխ... Յերեք, չորս: Դանկե զեհը: Շնորհակալ եմ: Խնդրեմ, ելի մի քանիսը: Ընդունայ, նոխ այնե:

ՅՈՒՐԿԵՎՈՒԶ. (Վորսենում ե) Բոլորն են:

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. Վոչ, ելի յերկուսը: Ըհը, ելի կա, Մեկն եւ
խնդրեմ—մեկն եւ, Ֆյունֆ, զեքս, ելի մեկը:

ՅՈՒՐԿԵՎԻԶ. Այլես վոչ մի տեղ չկա, չի յերկում:

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. Գուցե սնդուկի տակ ե գլորվել: Աշքերով նա-
յեցեք:

ՅՈՒՐԿԵՎԻԶ. (Հրում ե սնդուկը) Վոչ, այդպիսի բան չկա:

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. Զկա: Ինչ անհաճելի դեպք: Գուցե շեմքի
տակն ե:

ՅՈՒՐԿԵՎԻԶ. Ե՞ս, թողեք, քանին ե պակասում:

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. Մեկը:

ՅՈՒՐԿԵՎԻԶ. ՄԵԿԸ: Մի հատի համար չարժե անհանդստա-
նալ Միևնույն ե, կեղտոտված կլինի:

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. Այո: Բայց նրան չի կարելի այդպես թռղնեմ:
Չի կարելի:

ՅՈՒՐԿԵՎԻԶ. Չի կարելի: Ինչու:

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. Դաս իստայնե գիֆտ: Այդ թույն ե: Շատ
ուժեղ թույն ե—կարգունկելին:

ՅՈՒՐԿԵՎԻԶ. (Փշում ե մատներին յեվ նանում ե բաւկինակը)
Թույն:

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. Շատ ուժեղ թույն ե—ալկալոիդ: Յես չեմ դրան
հանել մի ցաղիկից: (Վարոնաւմ ե) Յեթե մարդը կուլ տա մի հատ
պիլյուլ—նա մեռնի և վայրկյանում, ինչպես մեկ ճանձ, զի այնե
ֆլիքե: Կաթված, անդամալուծություն, վոչ մի բժիշկ չիմանա,
թե ինչից ե: Դա պրոֆունդիսե գինիտա լյա կոմեղիա: Յես
չեմ կարող այդ այստեղ թողնեմ: (Վարանում ե, նայում ե աքո-
ների տակ):

ՅՈՒՐԿԵՎԻԶ. Վոչ մի տեղ չի յերկում: (Թաւկինակով սրբում ե
մատները):

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. (Դժգոհությամբ տուփը դնում ե գրպանը): Դը... դը...
դարձալ: (Բնեում ե այսը) Ու-ու-ռւ... անիծված ցավ... (Ընկնօւմ ե
բազկարօնին յեվ ցավից կուչուծիգ գալիս) Ոու-ու-ռւ: Ինչպիսի
տան ո-ոու-վոչ, այս ինչ... (Վեր ե բռչում)... Աղաջում եմ ձեզ,
ազաշում եմ, պարոն ուսուցիչ, մայն լիբեր մեյստեր:

Այդ բավեյին լավամ ե ազդարար զանգի այյնը:

ԲԵՌՆԱԿԻՐ. (Նտապ ներա ե գալիս տոմսը, ձեռքին) Համեցեք,
տոմսը—11 ոռըլի 75 կոպեկ: Ստացեք:

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. (Ետապում ե) Հ՞ը, Բ՞նչ: Տհմաը, ահա: Զանդը:
Հսում եք:

ԲԵՇՆԱԱԻԿԻՐ. Կիյեվից ձեր գնացքի աղղարարն ե (Հատակից
վերցնում ե ինչ-վար մեկի իրերը):

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. Ահա, ուրեմն տարեք: Շուտ տարեք կառմա-
տույց: (Վերցնում ե սնդուկը) Շուտ:

ԲԵՇՆԱԱԻԿԻՐ. Դեռ վոչ, դեռ վաղ ե: 24 րոպեյից կհասնի: Յես
կզամ, միք անհանգստանաւ: (Դնում ե):

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. Մպասեցեք, բեռնակիր: Տեսէք, հաւ: (Վազում ե
դեպի գուռը բեռնակիրի լետեվից):

ԿԱՐՖՈՒՆԿԵԼ. (Բոնում ե նրա ձեռքից) Խնդրեցեք, ինչ-գոր
կամենաք: Միայն մի կաթիլ:

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. (Զայրացած) Դեհ, դուք ուղղակի ծիծազում եք:
Ախր լսեցիք, վոր գնացքը 24 րոպեյից կհասնի: Դուք լսեցիք:
Դուք գիտիք, վոր այս գնացքն ինձ համար—ամբողջ կյանքիս
ճակատագիրն ե: Զե վոր յես ասացի, թե չեմ կարող այս գնաց-
քից ուշանար Վերջին գնացքն ե դեպի Մոսկվա:

ԿԱՐՖՈՒՆԿԵԼ. Մի կաթիլ... ու-ու-ու...

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. (Քարկացած) Հենց միայն քսան րոպե յե պետք
այս սնդուկը բանալու համար: Իսկ նորից փակելու հաժար հար-
կագոր ե յերեք տակ քրտնել: Յեզ դուք ուղում եք, վոր յես 24
րոպեյում... Թհու, 24 րոպեյում (Բոնում ե գլուխը, հանում ե
վերարկուն յեվ նեվալով սրբաւմ ե նակատը բաշկինտկով) Դե, այդ
արդեն ծաղր ե, այդ ճնշում ե ինտելիգենտ մարդու վրա:

ԿԱՐՖՈՒՆԿԵԼ. (Վօր կոացած յիվ այսր բանած գնում ե՝ սե-
ղանի մոս, ոյժմ ըուռ ե գալիս, մոռանալով ատամի ցավն իր ներ-
քին բարկացած) Ա՛, ճնշում ե ինտելիգենտ մարդու վրա: Դաս
իստ յուրերմնասիգ: Ո՛, յես շատ ուզենայի, վոր ձեզ վրա իսկա-
պիս ճնշեյին—ձեզ, ուռւս ինտելիգենտի և ստիպեյին ձեզ վերջա-
պիս աշխատել: Աշխատել և չերազել լավագույն կյանքի մասին
ու մատը մատին չխփել դրան նվաճելու, հասնելու համար:

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. Սուտ ե: Մեղքը մերը չե, վոր մեզ չեն թող-
նում աշխատելու: Յեզ վժըտեղ աշխատենք, Զեմստվոյնւմ, պե-
տական դումայինւմ:

ԿԱՐՖՈՒՆԿԵԼ. Ձեզ չեն թողնում: Դուք ինքներդ եք ծույլեր
ու լողիր—դուք ոսուս ինտելիգենտ: Դուք ընդունակ եք տասը
տարի սպասել, այնտեղ, վորտեղ բավական են րոպեներ Այ,

հենց հիմա, դուք խնայեք հիգանդ մարթուն, 24 րոպե, —ձեր կյանքի անողուտ ըոպեները: Դուք ասի՞ք, վոր 24 րոպե բավական չե ձեր զգվելի սնդուկը բաց անելու համար: Իսկ դուք գիտե՞ք, թե ինչ ե ժամանակը: Ո՛, յես յերկար եմ ուսումնասիրել ժամանակի պրոբլեմը և վորոշ բան հասկացել կյանքում: Դուք յերբեիցե լսել եք խտացած ժամանակի որենքի մասին, լիքը, ինչպես բաժակով շուրջ:

ՅՈՒՐԿԵՎԻՉ. (Բոնում ե գլուխը) Խտացած ժամանակի որենք... Բայց միթե ժամանակը կարող ե խիտ լինել: Այդ բուսականություն չե, վոր խիտ կամ ընդարձակ լինի:

ԿԱՐՄՈՒՆԵԿԵԼ. Դուք այդ ևս չգիտեք: Դուք տասը տարի յերազել եք այնպիսի մի անմիտ բանի մասին, ինչպիսին ե արտասահման սեկնելը, և այդ ձեզ համար մի ամբողջ գիպված ե, իսկ չգիտեք, թե ինչքան դիպվածներ կարող են տեղափոխել մի կետ ժամի մեջ, յեթե գրանք ցանկանան խտանաբ, սեղմվել Զգիտեք: Դեռ, իհարկե, չե վոր ձեզ համար ամբողջ տարիներ են հարկավոր մի դիպվածի հանդիպելու համար: Յեթե դուք մի նամակ եք ստացել կամ գիշերել եք ուրիշի կողոջ հետ, դուք արդեն կարծել եք, վոր այդ մեծագույն դիպվածն ե, վորը կրագականանա չորս տարի...»

ՅՈՒՐԿԵՎԻՉ. Սա դժանոց ե: Մնաք բարով, յես ժամանակ չունեք: Միթե: (Դրա սնից հանում ե ժամացույցը ինչ սկսում ե լարել, վորից ժամացույցն սկսում ե մելոդիկ կերպով նվազել) Իսկ ձեր 24 րոպեն, վորը խնայեցիք ինձ համար, Զգուշացեք, հա հա, վոր դրանց մեջ կամաց-կամաց ներս չսողան այնպիսի դեպքեր, վորոնցից դուք այնպես փութաջան թագնվում եք: Դուք կեռ չգիտեք, թե ինչքան դիպվածներ կարող են պատճեն 24 րոպեյում: Այդ ժամանակի ընթացքում կարելի յե բախտ զանել, կարելի յե կորցնել բախտը, կարելի յե սիրել ամբողջ կյանքում: Այս, այս, նույնիսկ մեռնել կամ վորեե սեկին սպանել —և այդ ամենը հենց նույն 24 րոպեյի ընթացքում: Իսկ ինչ ե մի սնդուկ բաց անելը: Հա-հա, Դե, դե, կհաջողվի ձեզ, ձեզ համար պահել այն 24 րոպեն, վորը դուք խնայեցիք ինձ համար: (Կամաց ծիծաղելով դուրս ե գնում):

ՅՈՒՐԿԵՎԻՉ. (Եմած ընկնում ե արորին) Բախտը գտնել, բախտը կորցնել... Սիրել ամբողջ կյանքում... Վորեե մեկին սպա-

նելու (Վեր և բռչում) Դեկտ: Սա ինչ վոր մղձավանջ ե—ավելի լավ ե դուրս դամ կառամատուց: (Հազնում ե վերաբօն լեկ ուժով հայում իր սեղուկը դեպի դուռը) Շուտ, գեղի թարմ ոդ:

Դուք բացված ե, ներս ե մտնում ՍՈՅՑԱՆ ՊԵՏՐՈՎՆԱՆ, 30 տարեկան կին, քիահեր, սեխ մաստո հազար յեվ յերեսին հոյ, վարն անհամբեր շարժումով դեն ե զցում:

ՅՈՒԻՐԿԵՎԻՉ. (Վախեցած) Սոֆիա Պետրովնա: Դուք: Դուք:

ՍՈՅՑԻԱՆ ՊԵՏՐՈՎՆԱՆ. (Բարկությունը զապելով) Զեյթը սպասում Այնպես չէ:

ՅՈՒԻՐԿԵՎԻՉ. Յես... Յես շատ ուրախ եմ... Յես չգիտեյի, թե դուք վերադարձել եք գյուղից... Բարե՛, թանկազինս:

ՍՈՅՑԻԱՆ ՊԵՏՐՈՎՆԱՆ. (Օքնիութեավ երա մեծնած ձեռքի) Այո, դուք չգիտեյիք: Դուք կարծում եյիք, վոր յես գյուղումն եմ և վոչինչ չեմ իմանա, և դուք կկարողանաք հանգիստ մեկնել: Միք շտապի, ժամանակ կունենաք մեկնելու ձեր... սիրուհու հետ, այն Մարուսյայի, կամ յես ինչ գիտեմ ում հետ:

ՅՈՒԻՐԿԵՎԻՉ. Դեհ, աստված սիրեք, ի՞նչ եք ասում: Ի՞նչ Մարուսյա: Յես մենակ եմ մեկնում, բոլորովին մենակ:

ՍՈՅՑԻԱՆ ՊԵՏՐՈՎՆԱՆ. Յեզ ահա յես իմացա, ի՞նչպիսի անհաջողություն: Լավ, ասենք թե դուք դադարեցիք հնձ սիրելուց, ասենք թե յերբեք չեք սիրել—յես պատրաստ եմ ներելու ձեզ, պատրաստ եմ: Բայց դուք մտածել եք արդյոք իմ ինքնասիրության մասին, մտածել եք արդյոք այն սոսկալի...:

ՅՈՒԻՐԿԵՎԻՉ. Բայց յես հավատացնում եմ ձեզ, Սոֆիա Պետրովնա: Սոնիա...

ՍՈՅՑԻԱՆ ՊԵՏՐՈՎՆԱՆ. Ինչեր եմ քաշել յես այդ բոպեներին: Ամբողջ քաղաքը ձեր մասին եր խսուում, բոլոր անկյուններում բղավում եյին ձեր մեկնելու մասին, իսկ յես, միայն յես վոչինչ չգիտե, ի: (Կորածառմ և ձեռքերը) Ինչպիսի խայտառակություն:

ՅՈՒԻՐԿԵՎԻՉ. (Հուսահատված) Բայց յես խսկապես մեկնում եմ Փարիզ ցուցահանդեսի—միթե այդ հանցանք ե: Սա ինչ-վոր մղձավանչ ե, ուղղակի ատամնացավ ե:

ՍՈՅՑԻԱՆ ՊԵՏՐՈՎՆԱՆ. Իսկ ձեր այն Մարուսյան, վորը մեկնում ե ձեզ հետ, այդ ել ե մղձավանջ: Այդ ել ե ատամի ցավ:

ՅՈՒԻՐԿԵՎԻՉ. Բայց յերդվում եմ բոլոր սրբերով...

ՍՈՅՑԻԱՆ ՊԵՏՐՈՎՆԱՆ. Միք ստի, Մարիա Իվանովնան ինձ ամեն բան, (Նօտում ե, բաւկինակավ յերեսը ծածկում ու լաց ե լինում) ամեն բան պատմեց: Հեռացեք:

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. Բայց այդ ճիշտ չեւ Սոնյա, հանգստացիր, խընդ-
քում եմ քեզ: Տեր ասովլած, իսկապես, ավելի լավ կլիներ յերեք
անդռւկ բաց անելը, չորս, քսան անդռւկ...

ՅՈՒՅԻՆԱ. ՊԵՏՐՈՎՆԱ. (Վեր ե կենում) Փախչել թագուն, փախչել
ինձանից, վորը դրան տվել ե այն ամենը, ինչը կարող եր տալ կինը:

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. Սոնյա, Աղաչում եմ քեզ: (Նայում ե օռլջը)
Խայտառակությունն, գնացքը հիմա կգա:

ՅՈՒՅԻՆԱ. ՊԵՏՐՈՎՆԱ. Մերը, հոգին, պատիվը: Իսկ այժմ, յերբ
ամենքը խոսում են իս խայտառակության մասին... Ա՛... մարդ
ե գալիս: (Քողը ցած ե քողնում) Փախչել ուրիշ աղջկա հետ:

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. (Հուսահատված) Դեհ, ասովլած վկա, այդ ճիշտ
չեւ: Յես մենակ եմ գնում, միթե դու ինձ չես հավատում:

ՅՈՒՅԻՆԱ. ՊԵՏՐՈՎՆԱ. Մարդ ե գալիս այստեղ: Մնաք բարով,
կարող եք մեկնել, կարող եք փախչել մենակ կամ յերկուսով,
ինձ համար միևնույն եւ: Յերբ յես տեսա, թե ինչպես վախեցաք
գուք, զզվանքս յեկագ: Իսկ յես, տեսեք հա, յեթե յերկուսիդ
միասին բռնեցի (Հանում ե փսերիկ ատբնանակը), ինձ թվում ե,
յես: (Յուրկեվիչը սարսափած յես ե հաւելում) Մնաք բարով:

Դուազ դուքս ե զնում, շիմքում կայիսով կոմս ԼՈՒՆԴԻՆԵՎԼԻՆ, վորն շտապում ե
ներտ զալ: ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ շշմած նստում ե իր սնդուկին:

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. Այո, սրանից հետո... ատամի ցավը հաճույք և
միայն:

ԼՈՒՆԴԻՇԵՎ. (Առոյգ ծերանի, պննամոլ վերարկույսով լիվ
նարը գլխարկով—ծուրածկա) Գրողը տանի, քիչ մաս վայր զցեր:
Կին չեր, այլ մըրիկ, փոթորիկ:

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. (Ուժասպառ) Իսկապես մըրիկ... Ատամնացավ...

ԼՈՒՆԴԻՇԵՎ. (Նկատում ե Յուրկեվիչին) Փառք աստծո, դեռ
այստեղ եւ: Պարոն, յեթե չեմ սխալվում, դուք պարոն Յուրկե-
վիչն եք:

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. (Վեր ե կենում) Յես եմ Յուրկեվիչը—ձեր խո-
նարին ծառան:

ԼՈՒՆԴԻՇԵՎ. Շատ ուրախ եմ: Կոմս Լունդիշն, վաղուց եյի
առիթ փնտուում, վորոշ չափով ձեր յերկրպագուն եմ, լսել եմ ձեր
գասախոսությունն այս ձմեռ մեր ակումբում, միստիկական անար-
խիզմի, թե անարխիստական միստիցիզմի մասին, լավ չեմ հիշում,
շատ լավ եր, շատ լավ: Բայց բանը գրանում չեւ: Սարսափելի
շտապում եյի, փառք աստուծո, դուք դեռ չեք մեկնել, ֆու:

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. Դուք... ուզում եյիք ինձ տեսնե՞լ:

ԼՈՒՆԴԻԻՇԵՎ. (Նսում ե) Ծխում եք: Խնդրեմ: Իհարկե, գյուղից 20 վերստ սլացա: Ահա թե ինչումն ե բանը: Յերեկ ինձ մոտ ճաշում եք Անդրեյ Իվանովիչը, ձեր դիրեկտորը, ի միջի այլոց պատմեց, վոր իր ուսուցիչներից մեկը, այսինքն՝ զուք, հասկանում եք, մեկնում եք Փարիզ. ցուցահանդիսի: Յես ուզակի վեր թռա: Յերբ: Դե, ասում ե վաղը, յեթե արդեն չի մեկնել: Կառք եմ նստում և սլանում կայարան:

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. Ուզում եք ինձ վորեկ բան հանձնաբարենք:

ԼՈՒՆԴԻԻՇԵՎ. Իսկ և խակ: Փոքր, բայց չափազանց հետաքըլը քեր հանձնաբարություն: Անչափ յերախտապարտ կլինեմ ձեզ:

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. Խնդրեմ, շատ ուրախ եմ:

ԼՈՒՆԴԻԻՇԵՎ. Թանկապինս, զուք պետք ե Փարիզից ինձ համար բերեք դշխուհի Հաղարան-Բլրուլին:

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. Դշ-դշխոյի Բլրուլին: (Չոռում ե աշխերը):

ԼՈՒՆԴԻԻՇԵՎ. (Միծաղում ե) Հա-հա-հա: Հանգատացեք, այդ այնքան ել դժվար չե: Այդ դժխուհին վոչ այլ ինչ ե, յեթե վոչ չընալ... ե... հմայիչ... ե... հիասքանչ հավ ե, հասկանում եք:

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. Հա-հավ ե:

ԼՈՒՆԴԻԻՇԵՎ. Դե, այո, հավ ե: Պետք ե ձեզ ասեմ, վոր յես մոլի հավաբույծ եմ: Լունդիշեկա կալվածքում մի ամբողջ հավային քտղաք ունեմ, մի աննկարազբեկի բան ե: Հասկանում եք, մի այնպիսի պարտեզ, ցանկապատեր, տնակներ, ջուր և գոյություն ունեցող բոլոր ցեղերի հավեր—մալյան, ճաղոնական, բրաբանյան, չինական, բննտամներ, պլիմուտ-ռուկիներ, լանդշաններ, գեղին, կարմիր, կապույտ, սպիտակ մանրիկ ու խոշոր հավեր, սի խոսքով, մի ամբողջ հավային թագավորություն: Իսկ թե ինչպիսի աքաղաղներ ունեմ: Ո՞ւ: Յեթե տեսնեյիք իմ զուքս դե Դիղին: Հասկանում եք, ամբողջովին սե, կարծես թագիշ լինիսկ ինչպիսի վեհություն ունի, քո նալյապինիցն ել բարձր, թեկուղ հենց բեմ դուրս բերես:

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. Ի՞նչ եք ասում: Ուզղակի զարմանալի յե:

ԼՈՒՆԴԻԻՇԵՎ. Այո, հիմա դանք մեր դշխուհու մասին: Դուք իհարկե, հասկանում եք, վոր յես հետեւում եմ բոլոր ցուցահանդիսներին, հավաբուծության վերաբերյալ ամսագրերին և այլն, ինքս եմ հավեր ուղարկում ցուցահանդիսներին, ունիմ շատ շքանշան-

ներ, դիսլոմներ, և այլն և այլն: Յեվ ահա մի շաբաթ առաջ Փաքիզից ստանում եմ վերջին ամսագիրը և ի՞նչ: Իմանում եմ, վորցուցահանդեռում, ի թիվս այլ հրաշալիքների, ցուցադրվել են հրասքանչ, ապշեցուցիչ, անորինակ մի հափ: Հնդկական ցեղին պատկանող՝ դժխուհի Հազարան-Բլրուլը, չտեսնված հազվագյուտ, Յեվը ըսպայում միակ եքզեմպլարը—վոչ Ռոտշիլդն ունի դրա նմանը, վոչ լորդ Դուրլայը: Կարող եք յերեակայել, թե ինչպես հուզվեցի:

ՅՈՒՐԿԵՎԻՉ. Ինչով և նա առանձնապես նշանավոր: Ներեցեք, չե վոր յես ագետ եմ դրանում:

ՅՈՒՐԿԵՎԻՉ. Ինչպես թե ինչով և նշանավոր: Այդ հավը հընդկական ցեղին և պատկանում, Հինդուարիայից եւ Նույնիսկ Հընդկաստանում ել հազվագյուտ եւ: Իսկ ի՞նչ գեղեցկություն: Ինչպիսի կուրծք, վոտքեր, գլուխ: Իսկ վետուրները: Իսկական վոսկու գույշնի: Դա մի պոհան յեւ և վոչ թե հափ:

ՅՈՒՐԿԵՎԻՉ. (Ծիծաղելով) Այս, իհարկե, յեթե պոհան յե...

ՅՈՒՐԿԵՎԻՉ. Հապա անունը: Դշխուհի Հազարան-Բլրուլ—զիտեք, արաբական հեքյաթներից եւ Այս, այ այդպիս, հենց վոր կարդացի այդ հրաշալիքի մասին, իսկույն հեռագրեցի, վոր գնում եմ նրան, իսկ մի հեռազիր ել տվի յեկըրս, Փարիզ, կոմս Իվանին, վրապեսզի նա վճարի դրա արժեքը: Բայց հասկանում եք, թե ինչպիսի անախարժություն: Կոմս Իվանը, յեղբայրս մեկնել է Բիարից. յես հուսահատվեցի, փողն ուզում եմ ուղարկել, բայց հասկանում եք, հայտնի չե, թե ուժ: Յեվ հանկարծ իմանում եմ ձեր մեկնելու մասին: Ազատեցեք, թանկազինս, փողը ձեզ նետ տարեք, բներեք ինձ այդ գժխուհին:

ՅՈՒՐԿԵՎԻՉ. (Տատանվելով) Ճիշտն ասած, չգիտեմ:

ՅՈՒՐԿԵՎԻՉ. (Հանում և ծրագր) Պետք եւ ասեմ, վոր բավականին պատկառելի գումար եւ 50000 ֆրանկ, մեր փողով 18500 ռուբլի: Դեռ, արկզը, ճանապարհածախսը, այս ու այն մանր ժախսերը, ընդամենը 19000 ռուբլի, դեռ, համենայն դեպս կլոր հաշվի համար 20 հազար ռուբլի, կարող եւ մաքս լինել, կուրսի փոփոխություն և այլն: Քսան հազար ռուբլի:

ՅՈՒՐԿԵՎԻՉ. Քսան հազար ռուբլի մի հավի համար: Մի հավի համար:

ՅՈՒՐԿԵՎԻՉ. Դե, իհարկե, հավի համար և վոչ թե փղի: Զեմ հասկանում, ինչ կա զրանում զարմանալու: Գիտեք, վոր դժխուհի Հազարան-Բլրուլին բռնելու և Յեվոպա բներելու համար հարկա-

վոր եր մի ամբողջ արշավախումբ կազմել։ Հարկավոր ե, հասկանաւմ եք, գնալ հարավային Հինդուարա, մագլցել Սատպուրի լեռները, լողալ Չամբազ դետով, մտնել ջունգլերը, ազատվել վագրերից, և այլն, և այլն—յես ձեզ ասում եմ, վոր իսկական «Հազար ու մի գիշեր»-ի հեջաթ և այդ։

ՅՈՒԻՐԿԵՎԻՉ. Այո, իհարկե, իհարկե։ Ներեցեք իմ տգիտության համար։ Բայց և այնպես, 20000 ոռութիւն մի հավի համար։

ԼՈՒՆԴԻՇԵՎ. Մի հավի, այն, մի հավի համար։ Դուք այն ասացեք, համաձայն եք գնալոբերելու, թե վոչ։

ՅՈՒԻՐԿԵՎԻՉ. Ներեցեք, բայց չե՞ վոր յես գնում եմ բավականություն ստանալու, զգարճանալու համար և պեսօք և ստիպված վերադառնամ ու այն ել հավով... Իսքներդ դատեցեք։

ԼՈՒՆԴԻՇԵՎ. Դատարկ բան ե, դատարկ բան, մի շաբաթում կդնաք, կդաք, ու նորից կարող եք Փարիզ վերադառնալ։ Ցես գետեմ, յերիտասարդ եք, հարուստ չեք, ճանապարհածախոի և կոմիսիայի համար առաջարկում եմ 3000 ոռութիւն։ Համաձայն եք։

ՅՈՒԻՐԿԵՎԻՉ. Յերեք հազար։ Ի՞նձ։ Զե վոր այդ մի ամբողջ հարստություն եւ։

ԼՈՒՆԴԻՇԵՎ. (Ծիծաղում ե) Ա՞յ, տեսնում եք — ուրեմն համաձայն եք։ Սրտանց շնորհակալ եմ, թանկազինս։ Ուրեմն, ահա, վերցնեք այս ծրաբը, դրա մեջ ճիշտ 23.000 ոռութիւն յի։ Այդտեղ ցույց ե արված և հասցեն, և մնացած բոլոր բաները (տալիս ե ծրաբը)։ Շատ ուրախ եմ, շատ ուրախ։ (Մերմարմ ե ձեռքը)։

ՅՈՒԻՐԿԵՎԻՉ. Բայց ճիշտն ասած, յես նույնիսկ ամաչում եմ։ Սա իսկ վոր արաբական հեքյաթ ե։

ԼՈՒՆԴԻՇԵՎ. Դշիուեկի Հագարան-Բլրուլ։ Հա-հա-հմ։ Վոչինչ, վոչինչ, միք շփոթվի։ Գլխավորն ե, բներեք ինձ այդ հրաշք թըսոչունը, իսկ դուք գիտեք, վոր այդ արժանի յե պարզեի։ Դէհ, ուրեմն, աղեյո, բարի ճանապարհ։ Հա, ներողություն, քիչ մնաց վոր մոռանայի։ Դուք, հարազատս, իհարկե, հավաբուծության մեջ տգետ եք։ Ա՞յ, դրա համար ել մի քանի հրահանգներ եմ գրել ձեզ համար։ Խնդրում եմ, հոգ տարեք հավի վրա, վոր աստված մի արացնե, ճանապարհին չիվանդանա։

ՅՈՒԻՐԿԵՎԻՉ. Դէհ, իհարկե, իհարկե։ Ամեն միջոց ձեռք կառնեմ։

ԼՈՒՆԴԻՇԵՎ. Հա, իհարկե, ամենից առաջ վանդակը։ Վանդակը հարկավոր ե որական առնվազն յերկու անգամ մաքրել։

Հարկավոր ե փոել մանր ավագ, սոճու փշտերեներ և սոխիր։
Հա իսկ հետո՝ ճաշը — մենյունս նրան կտաք ընդեղեններ, սա-
լաթ, գունավոր կաղամբ, կոտլետ, իսկ ավելի լավ կինի, ցորենի
հատիկներ ել կտցի։ Դուք, սիրելիս, այսպես կանեք, ճաշին նրան
կտաք կոտլետ և մի քիչ արթննի շիլա, հետն ել սալաթ։ Նախա-
ճաշին և ընթրիքին թող ցորենի կամ կորեկի հատիկներ կտցի։
Նա, իհարկե, խմում ե ջուր և կաթ։ Հա, կտաք նաև մի քիչ կիք
կամ ձվի մանրած կճեպ։ Բայց զլխավորը միջանցիկ քամին ե,
մոն շեր, պաշտպանեցեք նրան միջանցիկ քամիներից։ Վերցրեք ա-
ռաջին կարգի առաջին կուպե։

ՅՈՒԻՐԿԵՎԻՉ. Իհարկե, իհարկե։ Միտմիտ յեղեք։ Ամեն բնչ
կանեմ։

ԼՈՒՆԴԻՇԵՎ. Դեհ, առայժմս աղեցու Ուեվուար։ Յես դեռ
պետք ե կայարանապետի մոտ ել զնամ, նորից կանցնեմ ձեզ
մոտ։ Հա, ի դեպ, լավ կինի, վոր այս ամենը՝ մեր մեջ մեա —
գիտեք, կսկսեն ալս ու վախերը, այ, ինչպես դուք, վա, մի հա-
վին 20 հազար։ Ա՛խ, ախ։ Յես կնոջա ել չեմ ասել։ Հա, այդպես
լավ կինի։ (Գնում ե դեպի դուռը), Բոն շանս։

ՅՈՒԻՐԿԵՎԻՉ. Հաջողություն։

ԼՈՒՆԴԻՇԵՎ. (Վերադառնալով) Հա, քիչ մնաց, վոր մոռա-
նայի — լվերը։ Այդ արդեն վոչ վորպես ծառայություն, այլ բա-
րեկամություն կինի, նրա վրա վորոնեցեք լվերին, յեթե այդ
գարշելիներն առաջ յեկած լինեն, բայց զլխավորը — միջանցուկ
քամին ե։ Յեթե փորլուծություն ունեցավ, մի քիչ կարսիր գի-
նի կտաք։ Դեհ, յես գնացի։ (Բնում ե Յուրիելիշի ձեռքն ու սեղ-
մում։ Այդ ռոպեյին դուռը կամացուկ բացվամ ե յեվ Սոֆիա Պա-
րովնան ներ ե նայում, լսում ե նետագա խոսակցությունը)։ Տեսեք,
հա, հարազատս, լավ կպահեք իմ դշխուհուն, իմ անդին գանձին։
Զեղ եմ հանձնում իմ շիկամազ գեղեցկուհուն։

ՈՈՖԻՍ. ՊԵՏՐՈՎՆԱ. Ա՛, ուրեմն ճիշտ ե։ Դշխուհի։ Շիկահեր —
այդպես ել գիտեյի։

ՅՈՒԻՐԿԵՎԻՉ. Անպայման, անպայման, աչքիս լույսի պես
կպահեմ։

ԼՈՒՆԴԻՇԵՎ. Զմոռանաք, նրա համար առաջին կարգի առան-
ձին կուպե կվերցնեք։ Յեթե ցանկացավ լողանաք թող լողանա-
ք։ Դեհ, դուք ինքներդ ել յերբեմն արոքեցեք նրա կուրծքն ու տո-
տիկները։

ՍՈՅԻԱՆ. ՊԵՏՐՈՎՆԱ. Ի՞նչպիսի անամոֆություն։
ԼՈՒՆԴԻՇԵՎ. Հա, ի դեպ, սիրելիս, վորոնեցեք նրա վրա
վկերին։

ՍՈՅԻԱՆ. ՊԵՏՐՈՎՆԱ. Վոչ, այդ արդեն չափից անցավ։ Դեմ,
ուռ սպասիր, անամոթ (Հեռանում ե)։

ԼՈՒՆԴԻՇԵՎ. Դեմ, յես թուա Աղիյո (Գնում ե)։

ՅՈՒՐԿԵՎԻՉ. (Մենակ)։ Ի՞նչպիսի բախտավորություն։ Ի՞նչ-
պիսի կախարդական բախտավորություն։ 3000 սուրլի, ազատու-
թյուն, ուրախություն, կյանք։ Զե վոր այժմ կարելի յե գըողին
տալ գիմնազիան, յերկու տարի ճանապարհորդել, գնալ իտալիա,
գիրքս տալ տպագրության։ Աստված իս, ի՞նչպիսի բախտավորու-
թյուն ե։ Ո՛, իս սիրելի հավիկ, իմ դշխուհի Բլբուկ։ (Հեռվից լրս-
վում ե ուզեկառքի ծանր ու ձիգ սուլուցը)։ Ի՞նչպիսի յերջանկու-
թյուն ե առանց մի հոգսի լսել շոգեկառքի այդ հեռու հրապու-
րիչ սուլոցը։ Խաղաղ յերեկո, փափուկ բազմոց, բաց պատուհա-
նից գուրս մարում ե վերջալույսը, նշմարվում ու անցնում կապույ-
տին տվող դաշտերը և թոշում են վոսկյա կայծերը, և այնպես
արթնացնում հեռվում ե թղինու բուրավետ ծուխը, — իսկ շոգե-
կառքը սուլում ե շարունակ, սուլում ե ու զիլ ձայնով կանչում,
արթնացնում հեռվում արձականքին, իսկ անիվները բախտում են
ու բախտում, ու այնպես քաղցրությամբ նիրհում ե սիրտը... Իսկ
ապագայում կախարդական աշխարհ... Լույսերով վոլողված Փա-
րիզը... Պալատներ, կառքեր, կանայք, գեղարվեստի շողջողուն
տոնը։ Իսկ հետո — իտալիա, Վենետիկ, հանդարտ ջրանցքներ,
սև գոնդոլներ, ծով։ Վոչ, վոչ մի հեքյաթ ե սա։ Շուտ, շուտ, քանի
դեռ չեմ զարթնել։

Քոնում ե սմբակից ու բաշ տալիս դիպի դուռը։ Այդ բավեյին լույսում ե գանգի զիլ
ձայնը յել յերեխում ե, քե ինչպես կառամատուց և հասնում գնացքը, վարն անցնում
ե պատուհանի մոտով, լուսափօրելով, փեշոցով ու աղմկելով։ Դուռը բացված ե յել
ներս են մտնում կաղողներօվ ու նամրաւկներավ 2—3 նամրարդներ։ Խալայի ներս
ե վաղում դարձալ մի նամրարդ յել բզավում։ «Նուտ յեկե, մյուս ուղեգծի վրա
յե, իսկ յես ձեզ եյի վորոնամ», վարից հետո բոլորն ել շուպով դուրս են գնում։
Ապա ներս են մտնում յերկու կին, վօրսն հետեւից բեռնակիրք բերում ե լեռան
չափ իրեր, Կանայք անցնում են կանանց սենյակը։

ԲԵՌՆԱԿԻՐ. (Անցնելիս) Իսկույն, պարոն, հիմա ձեր իրերն ել
կտանեմ։ Միք անհանգստանա, ձեր գնացքը մի քիչ կուշանա։
(Գնում ե)։

Մտնում ե Արքիմեն, շտո յերիտասարդ, գեղեցիկ աղջիկ ե, շեկ-վուսկեզույն մազերով, Մուռնում ե սեղամին յեկ հայելու առաջ ուղարմ և մազերը, վորից հետո զնում ե գետի կանոնց սենյակը: Դեպի այդ սենյակն ե շտապում ՅՈՒԹԿԵՎԻԶԸ:

ՅՈՒԹԿԵՎԻԶ. Ի՞նչ եմ տեսնում: Լիդոչկա... Լիդա Պավլովնա:
ԱՐԴԱ. (Շօւռ ե գալիս) ԱՌիս, Ալեքսեյ... Սեմյոնովիչ...

ՅՈՒԹԿԵՎԻԶ. (Բոնում ե նրա յերկու ձեռքը) Աստված իմ... Դուք... դուք... (Համբուրում ե ձեռքը) Դուք այստեղ: Այդ վոր բախտիցն ե: Լիդա:

ԼԻԴԱ. Միթե ճիշտ եք դուք ինձ:

ՅՈՒԹԿԵՎԻԶ. Դուք զարմանում եք իմ համարձակության, իմ քնքանքի վրա — յերբ մտածում եք, վոր յես իբրոք, ձեզ քիչ եմ ճանաչում: (Բանում ե ձեռքից ու նստեցնում) Դուք հիշում եք այն ժամանակ, եռորսկում: Մտածել, վոր իմ կյանքում միայն չորս ամիս իմ ճանաչել ձեզ, նույնիսկ դրանից ել պակաս և այն ել այնքան վաղուց — այն որվանից յերկու տարի յե անցել վոր չեմ տեսել ձեզ: Յեկ միայն հիշել եմ այն ամեն բոպեն, ամեն մի բոպեն, վորն ապրել եմ ձեզ հետ, ձեզ մոտ, այնպես մոտ, բայց իրապես այնքան հեռու:

ԼԻԴԱ. Դուք... դուք ինքներդ չուզեցիք:

ՅՈՒԹԿԵՎԻԶ. Իսկ յերբ ինձ տեղափոխեցին կուրսկից և յես հրաժեշտ է յի տալիս ձեզոնց, և այնքան բան ունեյի ձեզ ասելու... դուք ձեր գլուխը շուռ տվիք ու լուռ մեկնեցիք ինձ ձեր ձեռքը. յես հեռացա... հեռացա ընդմիշտ: Ու հանկարծ սկսեցինք իրար նամակ գրել, ուշացած քնքանքները բռնկվեցին այնպիսի անզուսպ բոցով: Իսկ հետո նամակներն ել դաշտարեցին...

ԼԻԴԱ. Յես Պետերուրումն եյի... կուրսերում: (Լսվում ե յերշող զանգը, պատուհանի տակ կանգ առած զնացքը մեկնում ե):

ՅՈՒԹԿԵՎԻԶ. Յեթե իմանայիք, թե վորքան եմ յերազել ձեզ հանդիպել — և այսոր, հանկարծ... Դեհ, ասացիք, ասացեք, ինչու վոչինչ չի կարելի կարդալ ձեր աչքերում: Միթե այն ժամանակ չեյիք նկատում, վոր խելագարի ոկես սիրում եյի ձեզ: Միթե...

ԼԻԴԱ. Բայց և այնպես հեռացաք լնդմիշտ:

ՅՈՒԹԿԵՎԻԶ. Հեռացա, հեռացա: Իսկ ինչու չասացիք, վոր մնաս: **ԼԻԴԱ.** ԱՌիս, Ալեքսեյ Սեմյոնովիչ, անցածն անցել ե, ել յետ չի դառնա: Յեկ յես ել հիմտ առաջվանը չեմ: Այս տարիները... Պետերբուրգը, կուրսերն ինձ շատ բան սովորեցրին, աչքերս շատ բաց արին:

ՅՈՒԻՐԿԵՎԻՉ. Սպասեցեք, բայց ի՞նչպես ընկաք այստեղ։ Դուք դիմույթիք, վոր սա իմ քաղաքն եւ։

ԼիԴԱ. Ազգականներս այստեղ են ապրում։

ՅՈՒԻՐԿԵՎԻՉ. Այո, հիշում եմ, հիշում եմ, բայց կարծեմ, ինչ վոր գյուղումն են ապրում։

ԼիԴԱ. Այո, տասը վերստի վրա — Պոլինովկում։

ՅՈՒԻՐԿԵՎԻՉ. Իսկ ինչու յեք մենակ։

ԼիԴԱ. Մենակ չեմ, մայրս ու կատյան ել են այստեղ։ Իսկ դուք մեկնում եք։

ՅՈՒԻՐԿԵՎԻՉ. Յերևակայեցեք, ինչ անհամ բան։ Յերկու ապրի յերազել եմ ձեզ հանդիպել, իսկ այժմ, յերբ հասավ այդ ուրախառիթ ժամը, տասը ըովեցից հետո պետք ե մեկնեմ։ Յեկ մեկնեմ այնպես հեռու։

ԼիԴԱ. (Տիսուր) Այստեղ ուրիշ ուրախություն կգտնեք, սրանից ավելի լավը։

ՅՈՒԻՐԿԵՎԻՉ. (Խարը հօւզմաւնեավ) Ուրիշ ուրախություն։ Լիդա, Լիդա, ձեր գալուց մի հինգ ըովին առաջ մի խելահեղ ուրախություն եր համակել ինձ։ Բախտն ինձ ժպտաց։ Մի հարուստ պարոն ինձ մի... մի հանձնարարություն տվեց, և յերևակայեցեք, մի չնչին կոմիսիայի համար 3000 ոռութի վճարեց, 3000 ոռութի, վորպեսզի Փարիզից նրա համար ըերեմ մի... մի բան։ Հիշում եք, ինչպես յերազում արտասահման գնալու մասին — և հանկարծ 3000 ոռութի Բայց հիմա, Լիդա, հիմա այդ ամենը նսիմացավ ձեր առաջ։ Լիդա, յերկամբ ժամանակով եք յեկել այստեղ, այնպիս չե։ Յես դեռ ձեզ այստեղ կգտնեմ, այս։

ԼիԴԱ. Այո... Շատ յերկար։ Յես ամուսնանում եմ։

ՅՈՒԻՐԿԵՎԻՉ. (Վեր և կենաւմ) Ամուսնանում։ Աստված իմ, յերբ, մում հետ։ Լիդա։

ԼիԴԱ. Այստեղացի, Պոլինովկցի մի զեմստվոյականի հետ։ Պետքուրգում ծանոթացանք, Կոտելնիկովի հետ։

ՅՈՒԻՐԿԵՎԻՉ. Կոտելնիկովի։ Այդ զեմստվովի հետ։ Յեզ դուք սիրում եք նրան։

ԼիԴԱ. Մեզ կապողը սերը չե, այլ համոզմունքները։ Յես ձեզ ասացի, վոր Պետերբուրգում յես շատ բան սովորեցի։ Իսկ ամենից առաջ սովորեցի հարգել այն մարդկանց, վորոնք կովել են աբդորության համար։

ՅՈՒԻՐԿԵՎՀԾԻՉԾ. Դես իհարկես, ի՞նչպես կարող եմ յես հավասարովել այդ մարտիկին: Զե վոր նրան հալածել են, չե վոր նա աքսորումն ե յեղեւ չե վոր բանտ ե նստել: Հիշում եմ, լուս շարունակ հեղափոխության և նման բաների մասին եյիք յերազում:

Լի՛ԴԱ. (Ուզում ե գնալ) Ներեցեք ինձ: Ալեքսեյ Սեմյոնովիչ, յես գնալու յեմ: Մնաք բարով:

ՅՈՒԻՐԿԵՎՀԾԻՉԾ. Վոչ, սա մղձավանջ ե, իսկ յերբ ե ձեր հարսանիքը:

Լի՛ԴԱ. Չորեքշաբթի:

ՅՈՒԻՐԿԵՎՀԾԻՉԾ. Ինչպես: Այս չորեքշաբթի: Հինգ որից հետո:

Լի՛ԴԱ. Զե վոր չի կարելի ուշացնել — մեծ պասը կսկսվի:

ՅՈՒԻՐԿԵՎՀԾԻՉԾ. Վոչ, սա ինչ վոր անմտություն ե: Յես հինգ րոպեյցից պետք ե մեկնեմ, իսկ դուք հինգ որից հետո ամուռնանում եք: Յեկ այս ամենը յերկու տարվա անջատումից հետո, յերկու տարի շարունակ ձեր մասին յերազելուց հետո: Յեկ դուք այնպես անվըդով եք խոսնեմ այդ մասին: Դուք նրան հարգում եք: Իսկ սերը: Իսկ սերը, Լիդա: Միթե դուք յերբեք այդ մասին չեք լսել, Լիդա, թէկուղ հենց ձեր լրագրերից:

Լի՛ԴԱ. (Հօրգված վեր ե կենում) Սեր... սեր... Դա չափազանց մեծ շքեղություն ե, Ալեքսեյ Սեմյոնովիչ: Հաղարավոր մարդիկ վոչ միայն սեր, այլև ուստեղու հաց չունեն:

ՅՈՒԻՐԿԵՎՀԾԻՉԾ. Բայց և այնպես սիրում են: Ի՞նչպես չեք ամաչում, հրաժարվել սիրուց, դուք, վոր այնպես յերիտասարդ եք, այնպես գեղեցիկ: Յեկ միթե դուք վոչ վոքի չեք սիրել, թէկուղ այն ժամանակ — Կուրսկում:

Լի՛ԴԱ. Ինչու յեք այդ ինձ ասում, Ալեքսեյ Սեմյոնովիչ: Յեթե դուք ինքներդ չնկատեյիք, միթե յես, միթե յես կարող եյի այդ հայտնել: Ա՛ս, ինչ կարիք կա հիշելու: Զե վոր յես այնպես անսիրտ եմ: Զե վոր լսում եմ միայն և չեմ կարողանում ապրել այնպես լրանատեղծորեն, այնպես յերաժշտորեն: Յեկ յեթե դուք այն ժամանակ չգուշակեցիք... (Հառաջում ե ու ըուռ գալիս):

ՅՈՒԻՐԿԵՎՀԾԻՉԾ (Հօրգված) Բայց միթե այդ հնարավոր ե, Լիդա, իմ Լիդա: (Քոնաւմ ե նրա ձեռքերից) Միթե դուք ինձ սիրում եյիք, միթե սիրում եք հիմա: Վոչ, վոչ, այդ կլիներ... Լիդա, իմ Լիդա: Զե վոր յես սիրում եմ ձեզ, սիրում եմ անսահման, սիրում եմ խելագարի պես:

Լի՛ԴԱ. (Վեր ե կենում) Մնաք բարով:

ՅՈՒԽԿԵՎՀԻՉ. Լիդա, յեթե յես այն ժամանակ հիմար եմ յեղել, հիմա անմիտ չլինենք: Մի տասը բոպեցից հետո յես մեկնելու յեմ հեռու Փարէղ, վորն այնպես հմայքով ժպտում երինձ... բայց յես չեմ գնա: Ասացեք մի խոսք, և յես կմամբ ձեզ մատ: Յեղեք իմ կինը, Լիդա, յես ձեզ կտամ այն ամենը, ինչ վորունեմ: Ասացեք ինձ այդ խոսքը:

ԼիԴԱ. (Բուռն բափով փարված ե նրան) Սիշելի՛ս... Սիրելի՛ս...

ՅՈՒԽԿԵՎՀԻՉ. Լիդա... Լիդա... (Համբաւյներ) Ի՞նչ կախարդիչ յերջանկություն ե: Հենց հիմա գնանք քեզ մոտ, գնանք մայրիկիդ մոտ, լավ:

ԼիԴԱ. Այո, այո, իսկ հետո՝ քեզ մոտ:

ՅՈՒԽԿԵՎՀԻՉ. ինձ մոտ, ինձ մոտ, իմ ուրախություն: Ի՞նչպիսի յերջանկություն: Մի տասը բոպեառաջ կարող եյի արդյոք մտածել, վոր այսպիս շուտ կտեսնեմ քո չքնաղ աչքերը, վորոնք այնպես հաճախ յերեռում եյին ինձ իմ յերազներում:

ԼիԴԱ. Իսկ դու չեմ ափսոսում... Փարիզը:

ՅՈՒԽԿԵՎՀԻՉ. Դու, դու յես իմ յերջանկությունը: Դու յես իմ պշտուհի Հազարան-Բլբուրլը, իմ հավիկը: (Ծիծաղում ե) Ա՛խ, յեթե պատմելու լինեմ քեզ: Ախը չե վոր այդ դու յես, դու յես Հինդառարի վոսկյա թռչունը, այդ յես քեզ գտա Սատպուրի լեռներում, Զամբազի գետի մոտ, քիզ իմ Հազարան-Բլբուրին, Բայց ասա, լվերը քեզ չեն կծոտում:

ԼիԴԱ. (Միամսաբար) Ա՛խ, զիտես, սոսկալի կերպով: Վագոնում այնքան շատ լվեր կան, անհաշիվ. — Թհուր, չեմ ամաչում, անպիտան:

ԲԵՌՆԱԿԻՐ. (Ներս ե զալիս) Դուք եք Պոլինովկից յեկածորիորդը: Ձեզ համար կառք են ուղարկել:

ԼիԴԱ. Այո, այո, իսկույն, յես իսկույն կվերադառնամ:

ՅՈՒԽԿԵՎՀԻՉ. Դնանք: Հա, իսկ իմ իրմբը: Իրերս վրատեղ են:

ԲԵՌՆԱԿԻՐ. Ձեր գնացքն այս բոպեցիս կզա, պարոն: Յես հիմա կոմմի համար նարզան կբերեմ և իսկույն ձեր իրերը կտանեմ: (Քնում ե):

ՅՈՒԽԿԵՎՀԻՉ. Ա՛խ, հա, կոմսը, նա դեռ այնտեղ ե: Լավ լավ—յես պետք ե նրան...

ԼիԴԱ. Դեհ, գնանք, սիրելիս:

ՅՈՒԽԿԵՎՀԻՉ. Դու վազիր, ջանիկս, յես այս բոպեցիս, մի յերկու խոսք ունեմ ասելու այդ... կոմսին:

ՀԻԴԱ. ԴԵՇ, լավ: Յես այս բոպեյին (Գնում ե):

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. (Մենակ բռնում ե զլուխը) Գնացքը... գնացքը՝ Բայց և այնպես սա ինչ-վոր մի անհեթեթություն ե... Հավը... դշխուհի Հազարան-Բլբուլ... յերեք հաղար... Լիդոչկան... Հինգ բոպեյից հետո գնացքը... իմ գնացքը: (Հեռվից լափամ ե օշակի սուլոցքը) Պատուհան, բազմոց, վուկյա կայծեր... հեռավոր հնչուն, շշակ... Յեկ գնալով մոտենում ու մոտենում ե կախարդական պատրանքը: Բայց, չե վոր չեմ մեկնելու: Չեմ մեկնելու: Նշանակում ե կորավ այդ ամենը: (Սեղում ե զլուխը) Բայց գուցե, գուցե դեռ կարելի կլինի մեկնել Վոչ, վոչ, միթե այդ հնարավոր ե, նրա հարսանիքի որը նշանակված ե: Ա՛, թող կորչեն այդ մտքերը, յերջանկությունն այստեղ ե, ինձ հետ, դա իմ Լիդան ե և յետ նրան չեմ տա վոչ վոքի: (Երջում, ե սենյակում) Այո, նշանակում ե, պետք ե այս փողերը վերադաշնել կոմսին: Այո, (Հանում ե գրանից ծրարը) Հարկավոր ե... Քսան յերեք հաղար ոռուրիլի: Քսան յերեք հաղար — և նրա ինչին ե պետք այդ... Սրիկան դարձալ պետք ե շպրտի ար գումարը վորեն... Խսկապես, ինչ անարդարություն ե, յես յերազում ել այդքան փող չեմ տեսել, իսկ այդ նրա համար քմահաճույք ե, մի չնչին բան ե, մի հագի գին ե: Քսան յերեք հաղար... Մի ամբողջ հարստություն ե այդ, ազատություն, յերջանկություն, ոտար յերկիր, ծով, իսկ նրա համար — մի հիմար հավ ե: Յեթե նրան կաթված պատահեր, վարը վաղուց ե նրան սպասում, այս փողերն ինձ կմնան: Զե վոր նա վոչ վոքի չի ասել վոր այդ փողերն ինձ ե տվել, կնոջն անդամ չի ասել: (Հուզված ման ե գալիս) Այն ով եր կաթվածի մասին խռոողը: (Եփում ե նակատը) Ա՛խ, այդ այն ատամնացավոլ տարութինակ խորհրդականն եր:

ԲԵՌՆԱԿԻԲ. (Գալիս ե յեվ մատուցարանով բերամ մի ժիշ եարգանի զուր յեվ բաժակ ու դնում ե սեղանին) Շուտով արդեն ձեր գնացքը կլինի:

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. Յես միտքս փոխեցի, այսոր չեմ գնում: Ահա, վերցրեք: (Փող ե տալիս):

ԲԵՌՆԱԿԻԲ. Խորին շնորհակալություն: Կառք կիրամայե՞ք:

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. Այո... Վոչ: Հարկավոր չե: Ո՞ւմ համար ե այդ նարդանը:

ԲԵՌՆԱԿԻԲ. (Սեղանի մոտ հանում ե տեփ խցանը) Կոմու պատմիքեց: Պարոն կունդիշնը: Պատվիրեց այստեղ մատուցանեմ:

(Յուրիկեվիչը մտն և գալիս սենյակում): Պարոն, պարոն, այս ձեզ
պիլյուլը չէ:

ՅՈՒՐԻԿԵՎԻՉ. Ինչ պիլյուլ: (Շտապ) Վարտեղ ե:

ԲԵՌԻՆԱԿԻԲ. (Բարձրացնում ե ձեռքն ու ցույց ե տալիս պիլյուլը)

Ա՛յ, այստեղ ե, յերեկ սեղանի վրա յե զլորվել:

ՅՈՒՐԻԿԵՎԻՉ. (Սաստիկ նորգված) Այդ... այդ նրանն ե: Առամ
նացավով խորհրդականի տասներկույթը պիլյուլն ե:

ԲԵՌԻՆԱԿԻԲ. Ի՞նչ:

ՅՈՒՐԻԿԵՎԻՉ. Այս, այս, իմ պիլյուլն ե, (Խորում ե բեռնակրի
ձեռքից պիլյուլը) Յես եմ կորցրել: Կնացեք: (Բեռնակիրը զնում
ե: Յուրիկեվիչը կանգնած ե նախաբեմում, պիլյուլը ձեռքին) Մենք
սրան հատակին եյինք վորոնում, իսկ նա գցել եր սեղանին և
չեր նկատել: Տասներկույթը պիլյուլը: Ի՞նչ զարհուրելի գայ-
թակղություն ե այս, կարելի յե կարծել, վոր այդ դիտմամբ ե
արգված... (Մտսենում ե սեղանին) Շիշը բացված ե... Այն խեն-
թուկն ասաց, վոր կաթված, անդամալուծություն և վոչ մի բժիշկ
չի կարող հայտնաբերել թույնը... այն ժամանակ... այն ժամա-
նակ 23 հազարն իմը կլինի. հարուստ, ազատ և լիդան: Ո՛, ինչ
խայտառակություն ե, միթե յես կարող եմ այդքան ստորանալ:
Կարծես մարդ ե գալիս: Դե, չե վոր այդ գարշելի ծերուելի համար
միենույն ե մի տարի յել չի ապրելու: Ա՛, մարդ ե գալիս: Անիծ-
ված լինես: (Մտսենում ե սեղանին յեկ պիլյուլը զցում ե օքի մեջ,
ժիշը փակում ե յեկ շարունակ չորս կողմը նայելով բափ ե տալիս
ժիշը: Դուռը բացվում ե, Յուրիկեվիչը հետ ցատկում սեղանի մո-
տից: Մտնում ե Լունդիեսկը):

ԼՈՒՆԴԻԵՍԿ. (Ուրախ) Դեհ, հիմա ձեր գնացքը կլինի: Ամեն
բան հիանալի յե գնում: (Նստում ե սեղանի մօս) Ուրեմն, հույսու
ձեզ վրա յե, թանկապինս: Տեսեք, վորքան կարելի յե շուտ վերա-
դարձեք և նորից բարի ճանապարհ: (Վերցնում ե ժիշը):

Մտնում ե ՈԼՅԱ. ԶԵՐԵՎԱԿԻՆ, յերիտառարդ, սիրունատես կին ե, կոկ, բայց աղքատիկ
հազնված, զլխին բաշկինակ, անհամարձակ ժայլերով մոտենում ե ԼՈՒՆԴԻԵՍԿԻՆ:

ՈԼՅԱ. Վալերիան Սերգեևիչ, կարել՞ յե:

ԼՈՒՆԴԻԵՍԿ. (Ժիշը ցած ե դեռև յեկ օտու ե գալիս) Ա՛, Ի՞նչ:
Ա, այդ դու յես, Ռոյա: (Չոր) Ի՞նչ ես ուզում:

ՈԼՅԱ. (Անվաստիւրյանը) Ինձ վոչինչ... իսկ այ, յերեխաներս
են մեղք: Ոգնեցեք մեզ, Վալերիան Սերգեևիչ:

ԼՈՒՆԴԻՇԵՎՀ. ՔԵզ: Ոգնեմ: (Թաւնալի) Իսկ ամուսինդ, քո այն հռչակավոր գործադրություն ինչ է անում:

ՈԼՅԱՆ. Դուք արդեն գիտեք, Վալերիան Սերգեևիչ, նրան ձեր բակալեցին և ահա յերկու ամիս ե, ինչ մնացել ենք առանց կոպեկի:

ԼՈՒՆԴԻՇԵՎՀ. Ըհը: Ասում ես, ձերբակալեցին, այ թե ինչ:

ՈԼՅԱՆ. Յերեխաներս քաղցած են, առանց վոչինչ չունենք, ամեն ինչ ծախել ենք: Ոգնեցեք մեզ, Վալերիան Սերգեևիչ: Չե վոր յես փող չեմ խնդրում: Ձեր զավորից մի զույգ հավ տվեք, գոնե տանը ձու կունենանք յերեխաներիս համար: Չե վոր դուք շատ ունեք:

ԼՈՒՆԴԻՇԵՎՀ. Ա՛: Ահա թե ինչ: Դեհ, ուրեմն իմացեք, սիրելիս, (Յեռանդով) Ումն ասես կտամ, առաջին պատահած մուրացկանին կտամ, իսկ քեզ, յերբեք: Ասում ես, յերեխաներդ քաղցած են: Իսկ ինչու ամուսնացար այդ խռովարի հետ: Մեզ մոտ վատ եյթը ապրում, վատ եր: Յես քեզ հավատամ, վոր վաղը ամուսինդ իմ կալվածքում կարմիր աքաղաղ բաց թողնի, համ: Վոչ աղամլյակս, ինքդ ես ընտրել դեհ, հիմա յել ինքդ պատիժդ կրիր: Հեռացիր: Յես, յեղբայր, հեղափոխականների ու խռովարաների հետ խոսել անգամ չեմ ցանկանում: Գնաս բարով: (Ոլլան հառաջելալ դարս ե գնում):

ԼՈՒՆԴԻՇԵՎՀ. Տեսածք, կնոջս սանուհին ե: Մեզ մոտ եր ապրում, վոնց վոր դրախտում: Ա՛յ, խռովարի հետ կապվեց: Ինչ վոր տեղացի մի մեքենավարի հետ: Հա: Իսկ հիմա թոշնակին ըռնել են իր լավ լավ գործերի համար: Ֆուհ, բարկությունից քրտնեցի: Ե՞ն, ուրեմն այդպես, աստված ձեզ հետ, թանկագինս, գնացեք, հաջողություն եմ ցանկանում: (Նարից վերցնում ե գիշը) Ֆուհ:

ՅՈՒՐԿԵՎՀԾ. Այ թե անասուն եք յեղել համ, ինչպես տեսահիմա: Ներողություն, կոմս, ներեցեք: Աստված իմ, սա հիմա կխմի: Մի գուցե գուշ ինձ թույլ կտաք այնպես... այսոր չգնալ, այլ մի չորս որից հետո:

ԼՈՒՆԴԻՇԵՎՀ. (Նիշը ցած ե դնում յեվ վեր ե բռչաւ) Ի՞նչ ե, ծիծաղնում եք ինձ վրա, պարոնս: Խելազարվեցիք, ինչ ե: Ֆուհ, յես վախենում եմ, վոր հիմա յել արդեն ուշացած կլինեմ, զուցե արդեն ուրիշներն են գնել նրան, լորդ Դուրլեյը, Ռևելի պրինցը: Այստեղ ամեն մի ըստեն թանդ ե, իսկ սա: Դե, այդ գեղաքում պարզն ասացեք, յես իմ դաստիարակին կուղարկեմ: (Նստում ե):

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. (Վախեցած) Վոչ, վոչ: Վոչինչ, վոչինչ—յես կարող եմ և այսոր գնալ: Կարող եմ: Յես այդ հենց այնպես: Դեռ, այդ դեպքում խմիր անասուն, ու գնա գրողի ծոցը:

ԼՈՒՆԴԻՇԵՎ. Ե՞, յեթե կարող եք, ել կարիք չկա գլուխ ցավացնելու: (Կուանում ե օչի վրա):

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. Սպասեցեք, մի խմեք: Կարծես բաժակում ճանձ կա:

ԼՈՒՆԴԻՇԵՎ. (Յած ե դնում շիօը) Ճանձ: Ո՞ւր եւ Հա, ի դեպ, սիրելիս, դուք նրան յերբեմն մի քիչ միջատներ ել տվեք, զե, այնպես, մմեղներ բռնեցեք, բզեղներ, վորդեր: Հավերը գրանք շատ են սիրում:

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. բարձրացնում ե սեղմած բռնուցքը յեվ մի քայլ ե անում դեպի սեղանը:

ԼՈՒՆԴԻՇԵՎ. Ե՞, կարծեմ ամեն ինչ ասացի: Յանկանում եմ, վոր Փարիզում ձեզ համար ել մի հավիկ ճանկեք, հե, հե, հե, հե: (Լցնում ե ջուրը յեվ բաժակը մատեցնում ե որպանեներին) Զեր և իմ հավիկի կիսացը:

Մտնում ե Լիդիա:

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. (Զի նկատում կիդային, վօրը ներս ե յեկել ու կանգնել ժնիվում) Գրողը տանի ձեզ ել, ձեր հավին ել, գրողը տանի ձեր դշխուհի Բլուլին: Գրողը տանի ձեր փողերը: (Մանր ծրար շպրտում ե Լունդիշեվի վրա յեվ ձեռքից խլում ե բաժակը, ուր ե տախս շիօը: Կոմսը սարսափած վեր ե բռչում): Խեղդգեցեց դուք ձեր հազարներով, վորի համար քիչ մնաց վոր սպանեցի ձեզ, նզոված կատիկ: Ա: Գրողը տանի ձեր Փարիզը, վորին յես չեմ տեսնելու: Ա:

ԼՈՒՆԴԻՇԵՎ. (Սրբիլով ու դօդալով) Դուք... դուք խելազար եք: Դուք խելազարվեցիք: Յես վաղն իսկ կասեմ Անդրեյ Իվանովիչին, զոր ձեզ վանդի պաշտոնից... Յես... Յես կդրեմ հոգաբարձույթին... (Յուրիկիվիչը բարձրացրած բռնուցներավ նարձակվում ե նրա վրա: Կոմսը սարսափած դուրս ե փախչում):

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. (Կատաղած նայում ե տուրօք յեվ տեսնում ե Լիդային, վօրը կանգնած ե զարմացած ու վախեցած) Լիդա, Լիդա: (Վազում ե դեպի նա յեվ բռնում երա ձեռքերը) Լիդա, յես սարսափում եմ: Փրկիք ինձ, իմ աղջիկա: Լիդա, յեթե իմանաս, թե այս բռպեյին ինչ եյի վճռել անելու: (Կաշում ե նրան ամբողջովին դոդալով ու հնկեկալով):

ԼիդԱ. Ալեքսեյ Սեմյոնովիչ, սիրելիս, հանգստացեք: Յեւտեսնում եմ, թե ինչն ե ձեզ վըդովեցնում, մոռացեք այն մասսին, ինչ վոր խոսեցինք: Յես լսեցի, թե ինչպես բարկացաք, վոր Փարեկ չեք գնում: Դա լոկ մի ըոպէ յեր... Հրապույցի մի ըոպէ: Մնաք բարով:

Այս անգամին աջ կողմից շանդալի պանում ե գնացքն ու անցնում փայլելով ու շնծալով պատուհանների մոտից: Զանգեր յեվ իրարանցում:

ԼիդԱ. Տեսեք, այդ ձեզ գնացքն ե: Գնացեք, շուտով: Գնացեք:

ՅՈՒՐԿԵՎԻՉ. (Քղավելով) Լիդա, դու յեւ դու յեւ ես ինձ վորնդում:

Դուռը բացվում ե յել ներս և մտնում ՍՈՅԻԱ. ՊԵՏՐՈՎՆԱՆ: Լսում ե:

ՅՈՒՐԿԵՎԻՉ. Լիդա, հարազատս, մի հեռանա, ինձ մի թողնի, դու յես իմ վերջին յերջանկությունը:

ՍՈՅԻԱ. ՊԵՏՐՈՎՆԱՆ. (Արագ առաջ ե զալիս ու յետ ե զցում բողը) Ա՛, ահա թե վորտեղ ե ձեր աղավայակը, ձեր դշխուհին, ձեր սիրուհին, վորին դուք այնպես թագցնում եյիք: Դեռ առանց ամաչելու առացիք, վոր մենակ եք դնում, չամաչեցիք փախչել ինձանից հենց առաջին պատահած, ներկված փողոցային հավելժահարսի հետ:

ԼիդԱ. Ա՛խ: (Վազրում ե դեպի դուռը) Ի՞նչ խայտառակություն, ի՞նչ սարսափ:

ՅՈՒՐԿԵՎԻՉ. (Ձեռքը բարձրացրած հարձակվում է Սոֆիա Պետրովնայի վրա) Ստոր արարած: Լոիր, յեթե վոչ յես քեզ... կըսպանեմ:

ՍՈՅԻԱ. ՊԵՏՐՈՎՆԱՆ. (Արհամարհանեալ) Դու ինձ կսպանեած էի դան փախչում ե դուրս) Այս ըոպեյիս տուն գնացեք:

Լսում ե յերրօրդ զանգը, Հակը: Գնացքը մեկնում ե:

ՅՈՒՐԿԵՎԻՉ. (Ձեռքով սեղման ե գլուխը) Գնացքը, դշխուհի բլբուը, Քսան յերեք հազարը... քսանյերեք հազար... վեճնետիկ, Փարիզ... Կախարդական պատրանք: Յերջանկություն, աղատություն, փառք... կորցնել յերջանկությունը, սիրել ամբողջ կյանքում... 24 ըոպե: Իսկ անիմսերը շառաչում են, շողեկառը թռչում ե: Գնացքը, իմ գնացքը: Հեռացիք, իմ գնացքը: (Մի կողմ ե հրում օփորված Սոֆիա Պետրովնային յեվ փազում դեպի դուռը, բայց խկույն սարսափած յետ ե հաւզում, տեսնելով դուռն

միջ ժամացույցը ձեռքին կանգնած Կարմաւնկելին, վորը ժամացույցը բանալիով լարում ե ու կամսց ծիծադրում):

ԿԱՐՖՈՒՆԿԵԼ. Զալբաղերեց: Զեր գնացքն արդեն գնաց: Հուսով եմ, վոր այս 24 ըոպեցի ընթացքում չձանձրացաք, յերիտասարդ: Զեր ժամացույցը ճիշտ ե: Զի՞ շտապել: Իսկ իմ առամիցավու արդեն անցավ:

ՅՈՒՐԿԵՎԻՉ. (Բղավում ե) Դեկ: (Ուշաբափփում ե):

ԿԱՐՖՈՒՆԿԵԼ. Զալբաղերեց: Դատարկ շատախոսություն: Հեշտ ե ամեն ինչում գեերէն մեղադրելը:

ՎԱՐԱԳՈՒՅՐ

ՅԵՐԿՐՈՐԴ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Նույն կայարանը, 1919 թվին

Ներս են մտնում պորոշիկը յևլ կայարանապետը:

ՊՈՐՈՒԹԻՒԿ. Ասացեք, զեղի Խարկով գնացքը շնորհ կլինէ:
ԿԱՅԱՐ-ՊԵՏ. Ինչպես միշտ, 5.40:

ՊՈՐՈՒԹԻՒԿ. Իսկ զեղի Շեպետովկա:

ԿԱՅԱՐ-ՊԵՏ. 4.20: Միայն թե կուշանա: Կես ժամով:

ՊՈՐՈՒԹԻՒԿ. Շաբունակ ուշանում եւ Յերեխ բոլոր շոշեկառքերի
վրա ընկերներ են ու կոմիտեներ: Բոլշևիկներին են սպասում: Դե՛,
լավ, կտեսնենք: Գնանք հերթապահի սենյակը, Յես պետք ե
կայարանն ընդունեմ: (Դուրս են գնում):

Մտնում ե ՅՈՒԹԿԵՎԻԶԲ: Հիմա 32—33 տարեկան ե: Հուզված ե, Գրպանից նամակ ե
հանում: Կարդում ե, Պահում ե: Զպայնորեն շրջում ե սենյակում: Ծխում ե:

ՅՈՒԹԿԵՎԻԶԲ. Միթե սա հնարավոր ե: Նա, Լիդան, իմ վոսկե
Հաղարան Բլբուլը, իմ սիրեցլալ յերազանքը, վորին Շտարի առաջ
կորցը ի այս կայարանում, այնպես հիմար կերպով: Նա ինձ հի-
շում ե, զուցե և սիրում ե... Բնչ յերջանկություն ե այսքան
տարիների անջատումից հետո նորից զանել նրան... և այն ել
ինչպիսի տարիներից...

Մտնում ե ԿԱՐՖՈՒՆԿԵԼ, առաջին նման ելեզան հագնված, բայց արդեն ուրիշ
վերարկույթ, առաջվա պիս ձեռքին նամարուկ, նայում ե ժամացույցին: Տիանու-
թյամբ փերփերում ե:

ԿԱՐՖՈՒՆԿԵԼ. Հըմ: Դեր տառւզենդ: Դի ուհը զետցու շպատ:
(Ժամացույցը մասեցնում ե ականջին, զլաւիր շարժում ե) Ժամա-
ցույցը յետ ե մնում: (Հանում ե գրպանից ուրիշ ժամացույց) Աբեր

նեյն։ Զի գետ ըեփստու ե՛, պարզո՞ն, դուք չգիտե՞ք գնացքը յերբ
գնա կարշավատ։

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. (Անուշաղիր) Ճիշտը չգիտեմ։ Կարծեմ 35 ըոպե
ուշանալու յե։

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. Վամա։ Դաս իստ ունեցգերու։ Յես չեմ համա-
ձայն։ Յես պետք ե վաղը չե մյուս որ տանը լինեմ, Հայդելբեր-
գում։ Անպայման։ Ո՛, ֆերֆիլուխտի Հայդենլեբմ, ո՛, անմիթ յեր-
կիր, վոր յերեք ժամանակը չե գնահատել։ Յես չեմ կարող
ուշանամ։

Հանկարծ լսվում ե մեղսդիկ քիսկիսկոց, վոր կարծես նվազարկից լուիլիս լիմի։

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. (Գարմացած նայում ե ռուրջը) Այս ի՞նչ ե։ Վ՞որ-
տեղից ե այդ նվագը։ Կարծես ժամացույցի նվագ լինի... (Եփում
ե ճակատը) Վ՞որտեղ եմ լսել ելի այդպիսի նվագ։

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. (Գրպանից մի ժամացույց ել ե հանում—քիսկրիս-
կցն ագելի բարձր ե լսվում) Ալլ՛ տառեզնդ։ Յես չեմ կարող
ուշանամ։

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. (Գարմացած յես ե հաւկում) Աստված իմ։ Ու ըեմն
այդ գործ եք, Դարձյալ իմ ճանապարհի վրա։

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. Վամա։ Վաս վոլին զի։ (Լորում ե ժամացույցը)։
ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. Դեհ, ինարկե, դուք եք։ Ժամացույցներով ու
տատամի ցավով մեխանիկը, վորը... վորը...

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. (Ըշի տակով նայում ե Յուրիեվիչին) Վորը իյոթ
տարի առաջ ձեզ մի փոքրիկ դաս տվեց չշտապել և սովորեցրեց
ձեզ գնահատել կյանքի ամեն մի բռպեն։

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. Սատանան տանի ձեզ գասերը։ Դրանք ինձ
վըա շատ թանգ նստեցին։ Յես մինչև հիմա յել դեռ դողում եմ,
յերբ հիշում եմ այն յերեկոն։

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. Արեք, յես ի՞նչ մեղավոր եմ գրանում։ Յես
միայն մի համեստ գիտնական իմ և մեխանիկ ժամագործ։ Յես
ձեղ այն ժամանակ ասացի, վոր յես բավական հասկանամ կյան-
քից ու նրա որենքներից։ Նու, զարմանալի չե, վոր յես իմանամ
շունին դուրս հանել վառարանի հետեւց։ դեն հունդ առւս դեմ
ոփեն լյոկեն։

ՅՈՒԻՐԿԵՎՀԻՉ. Այո, բայց դուք վ՞որտեղից զիտեյիք, այդ բո-
լորը՝ վ՞որտեղից գիտեյիք։

ԿԱՐՖՈՒԻՆԿԵԼ. Գիտեյիք։ Ի՞նչ գիտեյի յես։

ՅՈՒՐԿԵՎԻՉ. Վերտեղից դիտեյք, վոր ինձ հետ այդքան զարմանալի ու վողբերգական արկածներ պետք եւ պատահեյին: ԿԱՐՖՈՒՆԿԵԼ. Դեհ, դա մաթեմատիկա յեւ, պարզ հաշվվ ե, որենք ե: Անցքերը կամ շատ սակավ են պատահում, կամ ընդհաւ կառակը, գալիս են ամբողջ խմբերով: Կյանքը դա խաղաթզերի կապուկ ե, վորտեղ կողիքները գալիս են մեկը մյուսի յետելից, կամ գրանք բոլորովին չի լինում և միայն վեցանոցներ ու յերկուսանոցներ են գուրս գալիս: Ժամանակը լինի կամ դատարկ ամբողջ տարին առանց զեպքերի, կամ խոտացած զանազան արկածներից, վորոնք թռչում են մեկ մյուսի վրա և ձյան պես թափվում մարդու գլխին:

ՅՈՒՐԿԵՎԻՉ. (Մտախոն) Այո, այդ այդպես ե, և պետք ե վոր շատ պարզ լինի, բայց և այնպես դուք վճրտեղից իմացաք, վոր հենց այն ժամանակ, հենց այն դիշերն ինձ վրա այդքան զեպքեր պիտի տեղային:

ԿԱՐՖՈՒՆԿԵԼ. Ե՛, այդ արդեն այնքան ել ոժվար չեւ: Դուք ինքներդ ասացիք այն ժամանակ, վոր տարիներ շարունակ ապրել եք շատ անգույն և ձանձրալի կերպով: Յեվ հանկարծ գնում եք արտասահման: Ե՛հ, ուշադիր մտքի համար այդ արդեն շատ շատ ե: Յես իսկույն հասկանամ, վոր ձեզ համար սկսվելու յեւ խոտացած ժամանակ, յերբ զեպքեր վազեն իրար յետելից ու լողան ոլլողիաների յերամների նման, վորոնք գնան ձու դնելու:

ՅՈՒՐԿԵՎԻՉ. (Ծիծաղելով) Այո, կարծես թե դուք իրավացի յեք... Բայց այն ժամանակ այնպես դուրս յեկավ, վոր կարծես դուք բաց թողիք ինձ վրա այդ բոլոր արկածները, վորպեսզի հատուցեք ինձ ձեր ատամի ցավին անտարբեր գտնվելուն համար: Հա, ի գետ, ինչպես ե հիմա ձեր ատամը: Հիմա ինձ մոտ կան այն կաթիլները—ուղղում եք:

ԿԱՐՖՈՒՆԿԵԼ. Զալբաղերեց: Կաթիլը կարող եք ձեր լեզվին կաթեցներ: Հիմար շատախոսություն: Հիմա ինձ կաթիլներ չեն հարկավար, այլ գնացք:

ՅՈՒՐԿԵՎԻՉ. (Ծիծաղում ե) Ճիշտ այնպես, ինչպես այն ժամանակ ինձ համար: Մեր գերերը փոխվել են, մայն հերը: Հիմա յես կարող եմ ձեզ խորհուրդ տալ չշտապել և շատ ել հույս չղնել ժամանակի վրա: Այժմ ժամանակը մեզ մոտ շատ ե խոտացած, հեղափոխություն ե, պատերազմ:

ԿԱՐՖՈՒՆԿԵԼ. (Քարկացած) Զալբաղերելյ: Միթե կարելի յե համեմատել: Իս բին դեր մայստեր դեր ցայտ: Յես ինքս եմ մայստեր իմ ժամանակի: Յես նրան բանել իմ ձեռքուժ և շարժել իմ ժամացույցները իմ ուզածի պես:

ՅՈՒՐԿԵՎՀԻՉ. Զգուշացեք, մայն հերր: Զեղանից ավելի ուժեղ վարդետ կա:

ԿԱՐՖՈՒՆԿԵԼ. Զալբաղերելյ: Զալբաղերելյ: Դատարկ շատախոսությունն Զկա ինձանից ուժեղ վարդետ:

ՅՈՒՐԿԵՎՀԻՉ. Կա, մայն հերր, և դա հեղափոխությունն ե: Նա կանգնեցրել ե բոլոր առանձին մարդկանց ժամացույցները և ստիպել ե նրանց իր մեծ ժամացույցի համաձայն ապրել ու մեռնել առանց հարցնելու, այդ նրանց դուրեկան ե, թե վոչ: Հեղափոխությունը, ընդմիշտ վերջ տվեց հանգիստ ու ծույլ կյանքին, վորի մեջ տառապուժ երինք մինչև այժմ: Ո՛, այժմ մենք այլևս չենք ձանձրանում: Ինչքան գեղքեր ու արկածներ տեղաց նա մեղ մրա, վորոնց առաջ, թե ձեր ատամի ցալը և թե այն յերեկոյան իմ գլխին յեկած պատահարները յերեխայական խաղիր են միոյն: Հիմա մենք առանց ձեզ ել գիտենք, թե ինչ ե խացած ժամանակը, խացած, չափազանց խացած որերը:

ԿԱՐՖՈՒՆԿԵԼ. Զալբաղերելյ: Հեղափոխությունը հարկատվոր ե ձեզ համար, փառած ուռւս ինտելիգենտի համար, վոր ձեր միջից գուրս հանի ծուլությունը և անգործությունը: Նա դեռ ձեզ քիչ ե ծեծել, իսկ ինձ համար նա սոսկալի չե, և հարկավոր չե, ալե՛ տառվենդ: (Քարկացած դուքս ե գնում):

ՅՈՒՐԿԵՎՀԻՉ. Դուք չեկամվ: Սպասիր, լիբեր հերր, դու մի ժամանակ իմ սրտի վրա պղպեղ ես ցանել, տես, վոր հերթը քեզ ել շնասնի:

Մտնում ե կուս լՈՒՆԴԻՇԵՎԸ, բետակրի ուղեկցուքյամբ, վորը նրա յետելից ներս և բաշտ մի կայտ իրեր: Կամքը համեմատաբար քիչ ե փախվել:

